

ՀԱՅ ՍՓՅՈՒՌՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱՑՈՒՄԸ

Բանալի բառեր – Սփյուռք, գաղթաշխարհ, Հայաստանի Հանրապետություն, Խորհրդային Հայաստան, Ցեղասպանություն, ՀԲԸՄ, Հայրենիք-Սփյուռք հարաբերություններ, հայրենադարձություն

Մուտք. գաղթաշխարհից դեպի Սփյուռք

Մեր ուսումնասիրություններից մեկում¹ անդրադառնալով հայ գաղթաշխարհի պատմության պարբերացմանը՝ այն հասցը էնք մինչև 1918 թ., երբ վերականգնվեց Հայաստանի քաղաքական անկախությունը։ Խնդիրն այն է, որ հայ պատմագիտության մեջ ընդունված է հայոց նորագույն պատմությունը հաշվարկել 1918 թվականից²։ Հիրավի, այդ թվականը նորագույն պատմաշրջանի սկիզբն է ոչ միայն հայոց, այլև համաշխարհային պատմության համար։

Հայ իրականության մեջ 1918 թվականը նոր էօ բացեց ոչ միայն հայրենիքում, այլև ի սփյուռք աշխարհի։ Մինչ այդ գաղութահայությունը զրկված էր հայրենի պետությունից, ավելին՝ հայրենիքը ոչ միայն չէր կարող որևէ կերպ աջակցել աշխարհում սփոռված իր զավակներին, այլև հենց ինքն օգնության կարիք ուներ։ Այսպիսով՝ 1918 թվականը նորագույն դարաշրջանի մուտքն էր հայ գաղթաշխարհի համար առաջին հերթին այն տեսակետից, որ ստեղծվել էր հայկական պետություն՝ դրանից բխող բոլոր ակնկալիքներով։

Այդ ժամանակ իրավիճակը մեծապես փոխվել էր հայ գաղթաշխարհում։ Ցեղասպանությունից փրկված հարյուրհազարավոր հայեր ցրվել էին աշխարհում՝ մի կողմից ավելացնելով վաղուց ի վեր գոյություն ունեցող գաղթավայրերի հայության թվաքանակը, իսկ մյուս կողմից՝ ստեղծելով նոր գաղթավայրեր։ Այդ ժամանակներից գաղթաշխարհը սկսեց կերպափոխվել (տրանսֆորմացվել)՝ գաղթավայրային իրականությունից անցում կատարելով դեպի աշխարհայացքային և կազմակերպական առումներով որակապես տարբերվող նոր մակարդակ՝ «սփյուռքան ձևաչափ»։ Վերջինիս կարևոր բնութագրիչներն էին.

¹ Տե՛ս Եղիազարյան Ա., Հայ գաղթաշխարհի պատմության պարբերացման փորձ, «Սփյուռքագիտություն», տարեգիրք, 2013, թիվ 2, էջ 3-28։

² Տե՛ս Հովհաննիսյան Պ., Հայ ժողովրդի պատմության պարբերացման հիմնահարցին նվիրված համաժողով, Պատմաբանասիրական հանդես (ՊԲՀ), 1993, թիվ 4, էջ 148-161։

1. հայրենի պետության՝ որպես աշխարհասփյուռ հայությանը միավորող գործոնի գոյությունը, որի արդյունքում սկիզբ առավ Հայաստանի Հանրապետություն-Հայ Սփյուռք (այսուհետև՝ Սփյուռք) հարաբերությունների փուլը,
2. Հայոց ցեղասպանությունից հետո գաղթաշխարհի հայության թվի գրեթե կրկնապատկման հետևանքով բազմաթիվ համայնքներում նոր իրավիճակի ձևավորումը,
3. ցեղասպանության հետևանքով հայրենիքը լքած հայության՝ քանակապես և որակապես ազդեցիկ դիրքի հասնելը գաղթաշխարհում, որի պատճառով Սփյուռքը սկսեց դիտարկվել գլխավորապես որպես Ցեղասպանության հետևանք¹,
4. համասփյուռքյան կազմակերպությունների գործունեության ընդարձակումը և աստիճանաբար նմանատիպ նոր կազմակերպությունների ստեղծումը, որը հետևանք էր վերոհիշյալ նոր իրողությունների պայմաններում հայությանը համախմբելու և ուղղորդելու պատմական անհրաժեշտության գիտակցման²,
5. 1920 թ. Հայաստանի Առաջին Հանրապետության խորհրդայնացումից հետո աշխարհասփյուռ հայության և հատկապես Սփյուռքի քաղաքական կազմակերպությունների նկատմամբ բացասական վերաբերմունքը և մի պահ նույնիսկ Խորհրդային Հայաստանի իշխանությունների կողմից հարաբերությունների խօսմն արտասահմանի հայության հետ, որը վերջինիս ստիպեց կենտրոնանալու սեփական կյանքի կազմակերպման հիմնախնդրի վրա՝ ձևավորելով հայկական համասփյուռքյան կազմակերպությունների ցանց:

Սփյուռքի պատմության պարբերացման համար կարևորագույն նախապայմանը Սփյուռքի և համապատասխան հասկացության ի հայտ գալու ժամանակաշրջանի ձգրտումն է:

Հ. Մելիքսեթյանը կարծում է, որ Սփյուռքը սկսել է կազմավորվել Առաջին համաշխարհային պատերազմից հետո, երբ հարյուրհազարավոր հայեր հայտնվել են հին գաղթավայրերում, վերջնականապես ձևավորվել 1920-ական թթ., և մեզանում շրջանառության մեջ է դրվել «Յրվել «Յրոնք» կամ «Սփյուռք» տերմինը³: Ի դեպ, նա համարում է, որ Սփյուռքի կազմավորումը տեղի է ունեցել Հայաստանում խորհրդային կարգերի հաստատմանը զուգահեռ: Այդ

¹Տե՛ս՝ ՍԵԼԻՔՍԵԹՅԱՆ Հ., Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980 թթ.), Երևան, 1985, էջ 49:

²Տե՛ս՝ Եղիազարյան Ա., Հայաստանի Առաջին Հանրապետության դեկալարության հաստատումը Սփյուռքում. «Հոգևոր Հայաստան»-ի ստեղծումը (հայեցակարգային որոշ դիտարկումներ), «Հայ գաղթականությունը և Հայրենիք-Սփյուռք կապերը 1918-1985 թթ.» միշագային գիտաժողովի գեկուցումներ, Երևան, 2011, էջ 48:

³Տե՛ս՝ ՍԵԼԻՔՍԵԹՅԱՆ Հ., նշվ. աշխ., էջ 4:

ժամանակ սփյուռքահայության թվաքանակը հասնում էր շուրջ մեկ միլիոնի¹:

Կ. Դալլարյանը զաղթաշխարհի «սփյուռքացման» գործընթացն ընդլայնում է Լոզանի խորհրդաժողովից (1923 թ.) մինչև 1931-1932 թթ. ընկած ժամանակահատվածը, երբ զաղթական հայությունը հիմնավորվեց տարբեր երկրներում, «թարմացրեց» գյություն ունեցող ու մարող զաղթավայրերը և ձևավորեց ազգային հավաքական կեցություն՝ «Սփյուռք» ընդհանրական անվանումով²:

Հաս Էդ. Մելքոնյանի՝ հայ իրականության մեջ «Սփյուռք» հասկացությունը ծնունդ է առել 1920-ական թվականներին, երբ Հայոց ցեղասպանությունից փրկված հարյուրհազարավոր հայերը, զրկված հայրենիք վերադառնալու հնարավորությունից, ցրվեցին աշխարհում և, գիտակցելով կատարվածի ճակատագրական նշանակությունը, զաղթաշխարհն իր՝ որակապես այդ նոր փուլում սկսեցին անվանել Սփյուռք³:

Ամփոփելով վերոբերյալը՝ կարող ենք նշել, որ Սփյուռքի աստիճանական ձևավորումը տեղի է ունեցել Հայոց ցեղասպանությունից հետո, և 1920-ական թթ. հայկական իրականության մեջ հայտնվել է «Սփյուռք» հասկացությունը:

1918-1920 թթ. Հայաստանի առաջին հանրապետության իշխանությունները փորձ կատարեցին ամրապնդելու կապերը զաղթաշխարհի հայության հետ: Սակայն հայկական անկախ հանրապետությանը վիճակված էր կարձատև գոյություն, և շուտով զաղթաշխարհի հայությունը ստիպված եղավ հարաբերություններ «կառուցել» հայկական նոր պետության՝ Խորհրդային Հայաստանի հետ, որի քաղաքական և ազգային առաջնահերթությունները սահմանվում էին Խորհրդային Սիության իշխանությունների կողմից: Ստեղծվեց նոր իրավիճակ, որն ուներ հետևյալ առանձնահատկությունները.

1. 1921 թ. զաղթաշխարհում հաստատվեցին Հայաստանի Առաջին Հանրապետության նախկին ղեկավարները, որոնք անմիջապես ձեռնամուխ եղան արտասահմանի հայության կյանքի կազմակերպման խնդրին,
2. հայկական քաղաքական կազմակերպություններն այդուհետև ստիպված եղան գործունեություն ծավալել բացառապես արտասահմանում,

¹Տէ՛ս նույն տեղում, էջ 49-53:

²Տէ՛ս Դալլարյան Կ., Հայ Սփյուռքի պատմություն (համառոտ ակնարկ), Երևան, 2004, էջ 75:

³Տէ՛ս Դյալլօվ Վ., Մելքոնյան Է., Армянская диаспора: очерки социокультурной типологии, Ереван, 2009, с. 42-43. Տէ՛ս նաև Մելքոնյան Էդ., Սփյուռք, «Սփյուռք հանրագիտարան», Երևան, 2003, էջ 9:

3. ձևավորվեց որոշակի քաղաքական հակադրություն Խորհրդային Հայաստանի և արտերկրի հայության շրջանում գործող ամենաազդեցիկ կազմակերպությունների միջև,
4. արտերկրի հայության նկատմամբ Խորհրդային Հայաստանի իշխանությունների վերաբերմունքը սկսեց մեծապէս ածանցվել վերոհիշյալ կազմակերպությունների նկատմամբ դիրքորոշումից, որոնց գործունեությունը երկրում արգելված էր,
5. Խորհրդային Հայաստանի իշխանություններն արտերկրի հայության հետ հարաբերվելու համար 1921 թ. ստեղծեցին Հայաստանի օգնության կոմիտեն, որի գործունեությունը գաղթաշխարհում հաջողված համարել չի կարելի նշված հակադրությունների պատճառով:

Նոր իրողությունների պայմաններում Սփյուռքում տարերայնորեն սկիզբ առավ ինքնակազմակերպման գործընթացը, որի առաջնեկը 1921 թ. մի շաբթ հասարակական-քաղաքական կազմակերպությունների միավորման արդյունքում վերջնականապէս ձևավորված Ռամկավար ազատական կուսակցությունն էր¹:

Այսպիսով՝ հնարավոր է վեր հանել նաև Սփյուռքի՝ որպէս ազգային համակեցական միջավայրի ձևավորման որոշ էական առանձնահատկություններ: Սփյուռքը, դատելով վերոհիշյալից, իրենից ներկայացնում էր գաղթաշխարհի՝ ընկերային և արժեքային առումներով որակապէս նոր մակարդակ, որին բնորոշ էին.

1. հայրենիքի հետ խիստ սահմանափակ հարաբերությունների առկայությունը, որի պայմաններում արտերկրի հայությունը ստիպված էր ապավինել միմիայն սեփական հնարավորություններին,
2. արտերկրի հայության շրջանում համասփյուռքան բնույթի կազմակերպությունների գործունեության ծավալումը,
3. այդ կազմակերպությունների շուրջ քաղաքական, մշակութային, կրթական, բարեգործական, երիտասարդական, լրատվական և այլ համասփյուռքան կառույցների ցանցի ստիղծումը,
4. հայկականության պահպանության առավել ընդունակուն միջավայրի ձևավորումը:

Կարենոր է նաև նշել, որ, ի տարբերություն գաղթաշխարհի, երբ տարբեր ընկերային ու արժեքային համակարգերում հայության գոյատևման և համարկման խնդիրների պարզաբանումը նախատեսում էր ի սկզբանե տարբերակված և առանձին մոտեցում, ապա սփյուռքան իրականությունը, պայմանավորված համասփյուռքան կազմակերպությունների շուրջ ձևավորված ազգային համակեցական միջավայրերի գոյությամբ, հայկականության պահպանության առումով նախնառաջ պահանջում է գլխավորապէս ամ-

¹Տե՛ս Դավթաբյան Կ., Ռամկավար Ազատական Կուսակցության պատմություն (1921-1940), գիրք I, Երևան, 1999, էջ 13, 21:

բողջական դիտարկում: Առավել կարևոր են դաշնում ընդհանրական գործընթացները Սփյուռքում: Այդ առումով առաջին հորիզոնականում Սփյուռքի համակեցության աշխարհագրական, էթնոժողովրդագրական, պատմական, մշակութային, հոգևոր-կրոնական և այլ հենքերի առկայության և դրանց պահպանման մակարդակի քննությունն է: Եթե գաղթաշխարհի պարագայում բացակայում էր աշխարհագրական հենքը, ապա այժմ Սփյուռքը ստանում է նաև աշխարհագրական հենք՝ համաշխարհային սահմաններ: Այդ սահմաններում որպես հայապահպանության գրավական են դիտարկվում համակեցության բոլոր հենքային արժեքները:

Սփյուռքի պատմության պարբերացումը պատմագիտության մեջ

Սփյուռքի պատմության պարբերացումը հաճախ է դարձել ուսումնասիրողների ուշադրության առարկա: Նրանք խնդրին անդրադարձել են տարբեր դիտանկյուններից և առաջարկել ուշագրավ պարբերացումներ: Ստորև կանդրադառնանք դրանցից հիմնականներին:

Կ. Դալլաքյանը կատարել է Սփյուռքի պատմության երկու կարգի պարբերացումներ՝ ելնելով Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների հիմնական զարգացումներից և Սփյուռքի պատմության հիմնական փուլերից: Նա Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները, առաջնորդվելով դրանցում առկա սկզբունքներով և կապերի աստիճանական ընդլայնման գործընթացով, բաժանում է հետևյալ ժամանակաշրջանների:

ա. Եթե դրանց հիմքում դրված էր ազգային միասնության սկզբունքը, և շեշտադրվում էր էթնիկ նույնության հանգամանքը. առաջին շրջանը ընդգրկում էր 1920-ական թթ. առաջին կեսերն ընկած ժամանակաշրջանը,

բ. Եթե հարաբերությունների հիմքում դրվեց դասակարգային շերտավորման սկզբունքը, և անհաշտ թշնամանք ձևավորվեց Սփյուռքի հայկական կուսակցությունների նկատմամբ: Ակավեց Սփյուռքի հիմնական հատվածի օտարման գործընթացը հայրենիքից: Այս ժամանակաշրջանը տևում է 1920-ական թթ. երկրորդ կեսից մինչև 1960-ական թթ. սկիզբը,

գ. Եթե հարաբերությունների հիմքում դրված էր քաղաքական շերտավորման սկզբունքը: Այս ժամանակաշրջանում, որն ընդգրկում է 1960-ական թթ. սկզբից մինչև 1988 թվականը, Խորհրդային Հայաստանի իշխանությունները հարաբերություններ են հաստատում Ռամկավար ազատական և Սոցիալ դեմոկրատ հնչակյան կուսակցությունների հետ՝ թշնամանք տածելով միայն Հայ հեղափոխական դաշնակցության նկատմամբ: 1964 թ. ստեղծվում է Սփյուռքահայության հետ

մշակութային կապի կոմիտեն, որն իրականացնում է ծավալուն գործունեություն,

- դ. Երբ աստիճանաբար վերացվում են բոլոր տեսակի շերտավորումները, և ազատ հարաբերություններ են հաստատվում Հայրենիքի և Սփյուռքի միջև: Այդ շրջանը սկիզբ առավ Սպիտակի երկրաշարժից հետո և շարունակվում է մինչ օրս:

Կ. Դալլաքյանը Հայրենիք-Սփյուռք առնչությունների 1918-1920 թթ. ժամանակաշրջանը չի ընդգրկել իր կազմած՝ Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների ժամանակագրության մեջ՝ այն ներկայացնելով ներածության կարգով: Պատճառն այն է, որ նորանկախ Հայաստանի Առաջին Հանրապետության դեկավարությունը ժամանակ չի ունեցել ծավալուն կապեր հաստատելու Սփյուռքի հետ՝ բավարարվելով միայն դժվարին դրության մեջ հայտնված հանրապետությանը Սփյուռքի օժանդակությունն ապահովելուն ուղղված քայլեր ձեռնարկելով²:

Դալլաքյանը փորձել է փուլերի բաժանել նաև բուն Սփյուռքի պատմությունը: Հստ նրա՝ ընդհանուր առմամբ կարելի է կատարել հետևյալ պարբերացումը.

- ա. գոյավորման փուլ (1920-ական թթ.), երբ գաղթաշխարհից անցում է կատարվում դեպի սփյուռքյան իրականություն,

- բ. ինքնահաստատման փուլ (1930-1950-ական թթ.), երբ կայանում է սփյուռքահայ կյանքը, և ձևավորվում սփյուռքահայության հավաքական կեցության միջավայրը,

- գ. զարթոնքի փուլ (1960-ական թվականներից մինչև մեր օրերը), երբ Սփյուռքում զարգացում են ապրել կրթությունն ու մշակույթը, ազգային-հոգևոր կյանքը և քաղաքական միտքը՝ ի դեմս Հայ դատի արդար լուծման համար մղվող պայքարի³:

Անտարակուսելի է, որ Կ. Դալլաքյանը Սփյուռքի պատմության պարբերացումը ներկայացնում է գլխավորապես Հայրենիք-Սփյուռք առնչությունների լույսի ներքո: Թեև նա փորձ է կատարել փուլերի բաժանելու նաև Սփյուռքի պատմությունը՝ այնտեղ տեղի ունեցող հիմնական զարգացումների հենքի վրա, սակայն նրա մոտեցումն ակնհայտորեն թերի է, քանի որ Սփյուռքի պատմությունը բաժանելով գոյավորման, ինքնահաստատման և զարթոնքի փուլերի՝ հեղինակը դրանք հստակորեն ընդգծված ենթափուլերի չի բաժանել: Ուստի խիստ ընդհանրական այդ բաժանումն էական հետևությունների հիմք լինել չի կարող:

Ուսումնասիրողներից Ա. Բաղալյանը մասնավորապես անդրադարձել է Խորհրդային Հայաստան-Սփյուռք կապերի պատմության պարբերացման

¹Տե՛ս Դալլաքյան Կ., Հայ Սփյուռքի պատմություն, էջ 23-51:

²Տե՛ս նույն տեղում, էջ 22-23:

³Տե՛ս նույն տեղում, էջ 78, 132-151:

խնդրին: Նրա կարծիքով՝ այդ կապերի պատմությունը կարելի է բաժանել երկու փուլի՝ 1921-1937 և 1945-1990 թթ.¹: Առաջին փուլում Խորհրդային Հայաստանի դեկավարությունը քայլեր է ձեռնարկել Սփյուռքի հետ առնչություններն առավել արդյունավետ դարձնելու համար, սակայն 1937 թ. խզել է կապերը նրա հետ²: Խզման ժամանակաշրջանն ընդգրկում է 1937-1945 թթ., որից հետո Ի. Ստալինը մեղմացրել է վերաբերմունքը Սփյուռքի նկատմամբ: Որոշվել է Սփյուռքի հետ կապերը կրկին դարձնել առավել արդյունավետ հիմք ընդունելով հայապահպանությունը և Խորհրդային Հայաստանի քարոզությունը³:

Սփյուռքի պատմության պարբերացմանը որոշ ընդհանուր գծերով անդրադարձել են նաև արտերկրում:

Խ. Թոլոյանը Սփյուռքի պատմությունը բաժանում է հետևյալ փուլերի.

ա. 1923-1965 թթ.⁴ վերականգնման կամ վերակառուցման փուլ, երբ գաղթաշխարհի հին ու նոր շերտերի ջանքերով աստիճանաբար ձևավորվում է Սփյուռքը, և հին կազմակերպություններից բացի՝ ստեղծվում են նաև նորերը,

բ. 1965-1988 թթ.⁵ մարտահրավերների փուլ, երբ Սփյուռքում տեղի ունեցող կերպափոխումները սկսում են վտանգել վերակառուցման ժամանակաշրջանի ձեռքբերումները և ազգային արժեքների ու մասնավորապես լեզվի պահպանության միջավայրը: Միաժամանակ վերականգնվում են կապերը Խորհրդային Հայաստանի հետ: Կարևորագույն խնդիրներից մեկը Սփյուռքում սկիզբ առած այսպես կոչված «սերունդների պայքար»-ն էր, որն արտահայտվում էր ի դեմս Հայոց ցեղասպանությունը վերապածների ու Հայաստանի խորհրդայնացումից հետո հայրենիքից արտաքսվածների միջև զաղափարաբանական հակասությունների: Այն առնչվում էր նաև Խորհրդային Հայաստանի իշխանությունների նկատմամբ թշնամական կամ բարեկամական մոտեցումների առկայությանը,

գ. 1988 թվականից մինչև մեր օրերն ընկած շրջափուլ, որը բնորոշվում է Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումով և Սփյուռքի էլիտաների միջև մղվող պայքարով⁶:

Խ. Թոլոյանի պարբերացումը պարունակում է էական ընդգծումներ, որոնք օգնում են խորությամբ ըմբռնելու Սփյուռքի պատմության զարգացման մի շարք առանձնահատկություններ:

¹ Տե՛ս **Բաղայան Ա.**, Խորհրդային Հայաստան-Սփյուռք կապերի պատմության փուլերը, «Հայ զաղթականությունը և Հայրենիք-Սփյուռք կապերը 1918-1985 թթ.» միջազգային գիտաժողովի գեկուցումներ, էջ 69-76:

² Տե՛ս նույն տեղում, էջ 69-72:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 73-74:

⁴ Տե՛ս **Tölölyan Kh.**, Elites and Institutions in the Armenian Transaction, Diaspora, A Journal of Transnational Studies, vol. 9, N 1, spring, 2000, pp. 107-136.

Ա. Փեթքին առանձնացնում է Սփյուռքի պատմության երեք փուլ.

ա. Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումից հետո մինչև 1960-ական թթ. սկիզբը, երբ սփյուռքահայության մեջ գերիշխողը Խորհրդային Հայաստան ներգաղթի գաղափարն էր, որը փուլային տարրերակով իրականացվում էր խորհրդային իշխանությունների կողմից,

բ. 1960-ական թթ. սկզբից մինչև Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումը, երբ արտերկրի հայություն ինքն իրեն համարում էր այլս բնակության պետության մշտական բնակիչ, սակայն շարունակում գրադարձ ազգային խնդիրների լուծմամբ,

գ. Հայաստանի քաղաքական անկախության շրջան, երբ սկսում է վերականգնվել ազգային միասնության (Եթնիկ ընդհանրության) գաղափար¹:

Նման բաժնումը թեև հիմնվում է Սփյուռքի զարգացման ընթացքում տեղի ունեցած կարևոր իրողությունների վրա, սակայն ակնհայտորեն ամբողջական համարվել չի կարող:

Տետարբրական է նաև «Policy Forum Armenia» կազմակերպության «Հայաստան-Սփյուռք հարաբերություններ. անկախությունից 20 տարի անց» վերնագրով գեկուցման մեջ տեղ գտած՝ Հայաստան-Սփյուռք հարաբերությունների պատմության պարբերացումը: Այն հանգում է հետևյալն:

ա. նախապատերազմական փուլ (1920-1945 թթ.), երբ հայկական իրականությունը երկիրեղկված էր, և տեղի էին ունենում «զուգահեռ» վերակառուցում կամ վերականգնում: Այս փուլում Հայաստանում կառուցվում էր խորհրդային տիպի պետություն, իսկ Սփյուռքում ձևավորում էին հավաքական կենսագործունեության միջավայր, կառույցներ ու կազմակերպություններ,

բ. հետպատերազմական փուլ (1945-1988 թթ.), երբ Սփյուռքը բաժանված էր երկու մասի՝ արտաքին ու ներքին: Արտաքին Սփյուռքի հետ հարաբերությունները «կառուցվում» էին գաղափարաբանական հակադրությունների և ընդհանրությունների սկզբունքով, իսկ ներքին Սփյուռքն ամբողջությամբ ենթարկված էր խորհրդային ազդեցությանը,

գ. 1988 թ. Ղարաբաղյան շարժմամբ Հայաստան-Սփյուռք հարաբերություններում սկզբնավորվում է նոր փուլ, որը կարելի է բնորոշել որպես հարաբերությունների վերականգնման շրջան, և որը ձգվեց մինչև 1991 թվականը,

դ. անկախության փուլ, երբ Հայաստան-Սփյուռք հարաբերությունները կառուցվում էին «de jure» սկզբունքով²:

¹ Տե՛ս The Armenians. Past and Present in the Making of National Identity, ed. by Ed. Herzog and M. Kurkchiyan, New York, 2005, pp. 126-131.

² Տե՛ս Armenia-Diaspora Relations: 20 Years Since Independence, A Publication of Policy Forum Armenia, 2010, pp. 7-10.

Կարելի է նկատել, որ թեև սույն ստորաբաժանումը հիմնված է իրատեսական մոտեցումների վրա, սակայն դարձյալ ամբողջական չէ: Մասնավորապես, անդրադարձ չկա այն կարևոր իրողությանը, որ 1991 թ. ի վեր Հայաստանի Հանրապետությունից հեռացած տասնյակհազարավոր հայերի հաստատումը զգալի տեղաշարժեր առաջացրեց Սփյուռքում՝ ազդելով նաև Հայաստան-Սփյուռք առնչությունների վրա:

Դատելով վերոհիշյալից՝ ակնհայտ է, որ Սփյուռքի պատմության պարբերացումը անհրաժեշտ է կատարել՝ մի կողմից ըստ բուն սփյուռքյան զարգացումների, իսկ մյուս կողմից՝ ըստ Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների բնույթի ու բովանդակության: Ստորև փորձենք ընդհանուր գծերով ներկայացնել Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների և Սփյուռքի պատմության կարևոր իրադարձությունները, որոնց ընկալումը հնարավորություն կտա կատարել Սփյուռքի պատմության ամբողջական պարբերացումը:

Հայրենիք-Սփյուռք առնչությունների հիմնական դրսերումները՝ որպես Սփյուռքի պատմության պարբերացման հիմք

Ի տարբերություն հայ գաղթաշխարհի պատմության, երբ հիմնականում բացակայում էի հայրենի պետությունը, Սփյուռքի պատմության ամբողջ ընթացքն ուղեկցել է հայկական պետությունը: Ուստի՝ եթե հայ գաղթաշխարհի պատմության պարբերացումն իրականացվում է իր իսկ հիմնական զարգացումների հենքի վրա, ապա Սփյուռքի պարագայում դրան պետք է հավել նաև առնչությունները հայրենի պետության հետ: Ավելին, 1918 թ. վերականգնված Հայոց պետականությունն անցել է երեք շրջափուլ՝ Առաջին Հանրապետություն, Երկրորդ կամ Խորհրդային Հանրապետություն և Երրորդ Հանրապետություն, որոնցից յուրաքանչյուրի ընթացքում Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները միմյանցից որակապես տարբերվել են գլխավորապես փոխընկալման ասպարեզում:

Դատելով վերոհիշյալից՝ Սփյուռքի պատմության պարբերացումն իրականացնելիս հարկ է հաշվի առնել երկու փոխկապակցված իրողություններ՝ հայրենի պետության առկայությունը և հիմնական զարգացումները Սփյուռքում:

Առաջին տեսակետից Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները XX դարում կարելի է բաժանել երեք հիմնական ժամանակաշրջանների՝ Առաջին Հանրապետության (1918-1920 թթ.), Երկրորդ կամ Խորհրդային Հանրապետության (1921-1991 թթ.) և Երրորդ Հանրապետության (1991 թվականից մինչև օրս):

Առաջին ժամանակաշրջանը Հայաստանի Առաջին Հանրապետության կարձատն գոյության և նրա դիմակայած ծայրահեղ դժվարությունների պատճառով կարելի է բնութագրել որպես զուտ Հայրենիք-Սփյուռք հարաբե-

բությունների սկզբնավորման փուլ: 1920 թ. պետության դեկավարությունը, քննարկելով Արտաքին գործերի նախարարի զեկուցումը զաղութքներում տարվելիք աշխատանքների մասին, որոշում է այդ նախարարության կազմում ստեղծել գաղութների բաժին՝ վերջիններիս «նյութական ու բարոյական ուժերը Հայաստանի օգտին օգտագործելու նպատակով»¹:

Երկրորդ ժամանակշրջանը նշանավորվեց դեռևս առաջին փուլում նախանշված՝ գաղթականության ներգաղթի կազմակերպմամբ: 1920-1930-ական թթ. տասնյակի հազարավոր գաղթականներ տեղափոխվեցին Խորհրդային Հայաստան: Այդ ենթապարբերաշրջանում գաղթականության վերջին խումբը Խորհրդային Հայաստան տեղափոխվեց 1936 թ.²: Սակայն 1937 թ. Խորհրդային Հայաստանում Հայկական բարեգործական ընդհանուր միության (այսուհետև՝ ՀԲՀՄ) գործունեության կասեցումով Խորհրդային Հայաստանի և Սփյուռքի միջև դադարեցվեցին բոլոր կապերը³:

Սփյուռքի պատմության կարևոր փուլերից մեկը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին սփյուռքահայության օգնության կազմակերպումն էր Խորհրդային Հայաստանին: Չնայած խորհրդային իշխանությունների կողմից մերժված լինելուն՝ Երկրորդ աշխարհամարտի տարիներին Սփյուռքի ուշադրության կենտրոնում մայր Հայրենիքն էր, որը դարձյալ կանգնած էր Վտանգի առջև⁴:

1946-1949 թթ. սփյուռքահայության ներգաղթը («Մեծ հայրենադարձություն») կարևոր երևոյթ էր Սփյուռքի կյանքում⁵: Չասկանալի է, որ հայապահպանության հիմնական դրդապատճառն ու նպատակն առնչվում էն հայության՝ հայրենիք վերջնական վերադարձին: Ուստի շուրջ 90.000 հայերի ներգաղթը Խորհրդային Հայաստան⁶ վկայությունն էր այն բանի, որ հայապահպանությունը հասել է գլխավոր նպատակին: Չնայած դրան, այն զգալիորեն սրեց ներսփյուռքյան հակասությունները, մասնավորապես այդ գործընթացի նկատմամբ Սփյուռքի կազմակերպությունների դրական կամ բացասական վերաբերմունքի առկայության պայմաններում: Այսպես թե այնպես, ստալինյան բռնապետության պայմաններում նույնիսկ գերնպատակի իրականացման գործընթացը չէր կարող միանշանակ արձագանքների արժանանալ սփյուռքյան իրականության մեջ⁷: Ավելին, 1949 թ. ընդհատելով

¹ Տե՛ս Սելիքսերյան Հ., նշվ. աշխ., էջ 45:

² Տե՛ս նույն տեղում, էջ 115:

³ Տե՛ս Ստելլայան Էդ., Հայկական բարեգործական ընդհանուր միությունը Խորհրդային Հայաստանում 1923-1937 թթ., Երևան, 1999, էջ 167-169:

⁴ Տե՛ս Սելիքսերյան Հ., նշվ. աշխ., էջ 170-171, Դալլաքյան Կ., նշվ. աշխ., էջ 41:

⁵ 1946-1949 թթ. ներգաղթի մասին մանրամասն տե՛ս Ստելլայան Ա., Խ դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում, Երևան, 2010, էջ 82-161:

⁶ Տե՛ս Սելիքսերյան Հ., նշվ. աշխ., էջ 274:

⁷ Տե՛ս Ստելլայան Ա., Հայրենադարձության հայկական փորձը (1946-1948 թթ.), ՊԲՀ, 2010, թիվ 1, էջ 149-160:

ներգաղթի ծրագիրը և հալածանքների ենթարկելով ներգաղթածներին¹ ԽՍՀՄ իշխանությունները «հիմնավորեցին» Սփյուռքում բնակվող իրենց ընդդիմախոսների կռվանները:

1960-1980-ական թթ. Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների սերտացման կարևոր փուլ էին, երբ Խորհրդային Հայաստանը Սփյուռքի հետ իր առնչությունները բարելավվելու նպատակով 1964 թ. հիմնադրեց Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն²:

1988 թ. սկիզբ առան մի կողմից Սպիտակի երկրաշարժից տուժածների համար Սփյուռքում օգնություն հավաքելու, իսկ մյուս կողմից՝ հայ նորօրյա ազատամարտին աջակցելու կամ ուղղակի մասնակցության գործընթացները:

Երրորդ ժամանակաշրջանը նշանավորվեց 1991 թ. Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումով, երբ փաստացիորեն «օրինականացվեց» դեռևս 70 տարի առաջ հայրենիքից հարկադրաբար հեռացած կազմակերպությունների վերադարձի իրավունքը:

1991-1998 թթ. Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների զարգացումն ի վերջո ավարտվեց մասնակի բախմամբ, որն իր հիմնական դրսերումը ստացավ 1994 թ. Հայաստանի Հանրապետությունում ՀՅԴ գործունեության ժամանակավոր կասեցմանը վերաբերող՝ ՀՀ նախագահ I. Տեր-Պետրոսյանի հրամանագրով: Բացի դրանից, խնդիրներ առաջացան Սփյուռքի մյուս կուսակցությունների և նրանց հայաստանյան մասնաճյուղերի միջև: Այս շրջափուլի հիմնական ձեռքբերումը եղավ «Հայաստան» համահայկական հիմնադրամի ստեղծումը 1992 թվականին:

Հայրենիք-Սփյուռք հարաբերություններում կարևոր փուլ էր 1998-2008 թթ. միջակայքը: 1998 թ. Սփյուռքի քաղաքական կազմակերպություններից առաջինը և առայժմ միակը՝ ՀՅԴ-ն, իր կենտրոնավայրը տեղափոխեց հայրենիք: Մյուս կողմից սկիզբ առավ Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների զարգացման նոր փուլը, որը նշանավորվեց քաղաքական ընդհանուր օրակարգի հստակեցման գործընթացով: Հայաստանի Հանրապետության իշխանությունները քաղաքական օրակարգի մաս դարձրին Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը:

Հայրենիք-Սփյուռք միասնական օրակարգի մշակմանն էին միտված Հայաստան-Սփյուռք առաջին (1999), երկրորդ (2002) և երրորդ (2006) խորհրդաժողովները:

Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների պատմության հաջորդ ենթաշրջափուլը սկսվեց 2008 թ. և նշանավորվեց ՀՀ Սփյուռքի նախարարության ստեղծումով:

¹Տե՛ս նույն տեղում:

²Տե՛ս Միքայիլանյան Ռ., Հայրենիք-Սփյուռք մշակութային կապերը 1966-1990 թվականներին, Լրաբեր հասարակական գիտությունների (ԼՀԳ), 2008, թիվ 2, էջ 209-218:

*Սփյուռքան հիմնական զարգացումները՝ որպես Սփյուռքի
պատմության պարբերացման հիմք*

Ինչպես նշվեց, Սփյուռքն իրենից ներկայացնում էր հայ զաղթաշխարհի զարգացման որակապես նոր վիճակ, որի կարևոր բնութագրիչներից մեկը կազմակերպական բարձր մակարդակն էր:

Սփյուռքի կազմակերպման գործընթացն ընդգրկում է 1920-1930-ական թվականները: 1921 թ. մի շարք հասարակական-քաղաքական կազմակերպությունների միավորումը հանգեցրեց քաղաքական նոր կառույցի՝ Ռամկավար ազատական կուսակցության ստեղծմանը, որը եկավ համալրելու Սփյուռքի քաղաքական ներկապնակը:

1921 թ. Սփյուռքում հաստատվեցին Հայաստանի Առաջին Հանրապետության նախկին ղեկավարները, որոնց ներկայությունը մեծ նշանակություն ունեցավ սփյուռքահայության կյանքում: Նախկինում առիթն ունեցել ենք անդրադառնալու 1920-1930-ական թթ. աշխարհասփյուռ հայության շրջանում «Հոգևոր Հայաստան» կոչվող համակեցական համակարգի ձևավորման նախաձեռնությանը, որի հիմնական նպատակը եղել է համասփյուռքյան բնագավառային-մասնագիտական կազմակերպությունների և համայնքային կառույցների միջոցով հայության համար ներազգային կենսագործունեության դաշտի ձևավորումը¹: Շուտով նման համակարգեր սկսում են ձևավորել նաև արտերկրում գործող այլ համասփյուռքյան կազմակերպություններ: Դա յուրօրինակ մի պատասխան էր Խորհրդային Հայաստանի գրաված դիրքորոշմանը և համաշխարհային նոր իրողություններին: Հայաստանի Խորհրդային Հանրապետությունը կտրում էր կապերը Սփյուռքի հետ, որի հետևանքով սփյուռքյան ազգեցիկ կազմակերպությունները սկսում են սեփական ուժերով իրականացնել Սփյուռքին կազմակերպված վիճակ հաղորդելու առաքելությունը:

Համասփյուռքյան կառույցներից թերևս միակը, որը 1920-1930-ական թթ. պահպանում էր կապերը Խորհրդային Հայաստանի հետ, ՀԲԸՄ-ն էր: Վերջինս Խորհրդային Հայաստանի իշխանությունների համար ընդունելի էր համարվում այն պարզ պատճառով, որ Հայաստանի Առաջին Հանրապետության իշխանությունների հետ չէր համագործակցել²: Ուստի 1923 թ. Խորհրդային Հայաստանի իշխանությունները ՀԲԸՄ արտոնեցին երկրում հանրօգուտ գործունեություն իրականացնելու առաքելություն³:

¹ Տե՛ս Եղիազարյան Ա., Հայաստանի Առաջին Հանրապետության ղեկավարության հաստատումը Սփյուռքում, էջ 41-52: Տե՛ս նաև Վրացյան Ս., Խոսք ընդ ուսուցչի, Տ. Տ. Գևորգ Զ սրբ. կաթողիկոսին, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի «Տարեգիրք», Երևան, 2009, էջ 207-213:

² Տե՛ս Մելքոնյան Էդ., Հայկական բարեգործական ընդհանուր միությունը Խորհրդային Հայաստանում, էջ 24:

³ Նույն տեղում, էջ 28:

Այս ամենից պարզ է դառնում, որ արտերկրի հայությունը կամ առնվազն վերջինիս կազմակերպված հատվածը ստիպված էր որդեգրելու գուտ սփյուռքյան գործունեություն: Այսպես, հաշվի առնելով նաև հայրենի պետության կողմից մերժված լինելու իրողությունը, աստիճանաբար ծնեց «Սփյուռք» հասկացությունը՝ որպես առանձին, ինքնակազմակերպվող և ինքնակազմակերպվող ամբողջություն: Վերջինիս ձևավորումն իր արտահայտությունը գտավ նաև «Հոգևոր Հայաստան», «Անհայրենիք պետություն» և նմանատիպ այլ հասկացությունների ի հայտ գալով¹:

Անմիջապես անցում կատարվեց սեփական ուժերով հայապահպանության ծրագրերի, հայության կազմակերպման և ուղղորդման խնդիրների լուծմանը: Մեկը մյուսի հետևից սկսեցին ծնունդ առնել կրթական, մշակութային, երիտասարդական և այլ կազմակերպություններ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքով վտանգված հայության իրավունքների պաշտպանության հրամայականը 1940-ական թթ. աշխուժացնում է հայ քաղաքական միտքը Սփյուռքում, և հայության ներկայացուցիչները մի կողմից հարաբերությունների մեջ են մտնում նացիստական Գերմանիայի հեկավարների հետ՝ հայ ռազմագերիների կյանքը փրկելու և գրավյալ տարածքներում հայության անվտանգությունն ապահովելու նպատակով², իսկ մյուս կողմից՝ 1944 թ. ԱՄՆ-ում կյանքի են կոչում քաղաքական բնույթ ունեցող Հայ դատի հանձնախումբը, որի առջև դրվեց հայության քաղաքական, սոցիալական, տնտեսական և այլ իրավունքների պաշտպանության խնդիրը³:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո սկիզբ առած սառը պատերազմը երկիրեղեց հայկական իրականությունը նաև աշխարհաքաղաքական առումով: Խորհրդային պետության սահմաններում բնակվող հայությունը և Սփյուռքը փաստացիորեն հայտնվեցին երկու հակադիր ճամբարներում:

Չնայած 1946-1949 թթ. սփյուռքահայերի զանգվածային ներգաղթի կարևորությանը, դրա հետևանքները Սփյուռքում զգալի են: Մի շարք համայնքներ զգալիորեն տուժել են և դարձել ավելի սակավաթիվ: Նրանց առաջ դարձյալ ծառացավ կայացման և գոյատևման խնդիրը⁴:

1940-1950-ական թթ. Սփյուռքի պատմության մեջ մտան որպես համասփյուռքյան մշակութային կառուցների ստեղծման ժամանակահատված:

¹ Տե՛ս «Յուսաբեր» օրաթերթ, Կահիրե, 22 հունվար, 1924:

² Տե՛ս Պատմագրություն Հայ Յեղափոխական Դաշնակցության, քառահատոր շարք՝ նվիրված ՀՅԴ 113-ամյակին, Դ հատոր, Երևան, 2003, էջ 341-347: Տե՛ս նաև Նավասարդեան Վ., Անպարկեշտ արշալի մը առթիվ, Կահիրե, 1948:

³ Տե՛ս Պատմագրություն Հայ Յեղափոխական Դաշնակցության, Դ հատոր, էջ 308:

⁴ Իրանահայ համայնքի խնդիրների վերաբերյալ մասնավորապես տե՛ս Ստեփանյան Ա., Սարգսյան Հ., Իրանահայերի ներգաղթն ու վերաբնակեցման խնդիրները (1946-1970-ական թվականներին), ՊԲՀ, 2009, թիվ 1, էջ 43-53:

Ռամկավար ազատական կուսակցությունը 1947 թ. հիմնադրեց «Թեքեյան» մշակութային միությունը, իսկ Սոցիալ դեմոկրատ հնչայան կուսակցությունը 1955 թ. ստեղծեց «Նոր Սերունդ» մշակութային միությունը: Դեռևս 1928 թ. ՀՅԴ կողմից ստեղծվել և Սփյուռքում ծավալուն գործունեություն էր իրականացնում Համազգային հայ կրթական և մշակութային միությունը:

Տայ դատի լուծման և Հայոց ցեղասպանության ճանաչման հրամայականը սփյուռքահայ որոշ շրջանակներում աստիճանաբար ի հայտ բերեց արմատական տրամադրություններ, որոնց հետևանքով 1970-ական թթ. Սփյուռքում սկիզբ առավ ռազմաքաղաքական պայքարի փուլը, որը շարունակվեց մինչև 1980-ական թթ. երկրորդ կեսը: Զինված պայքար են սկսում Հայաստանի ազատազրության հայ զաղունի բանակը և Հայոց ցեղասպանության արդարության մարտիկները¹: Այդ պայքարն սկսեց մարտել 1980-ական թթ. Վերջերին, սակայն սկիզբ առնող Արցախյան շարժումը և մոտալուս ինքնապաշտպանական կողիվները նոր մարտադաշտ տրամադրեցին տասնամյակից ավելի տևած զինված պայքարում թրծված մարտիկներին: Վերջիններից շատերը մարտնչեցին Արցախում և փառքով պսակեցին իրենց անունները:

1991 թ. սկիզբ առած նոր շրջափուլի կարևորագույն առանձնահատկություններից էր այսպես կոչված Նոր Սփյուռքի «ի հայտ գալը»: Նախկին խորհրդային հանրապետություններում բնակվող հայերը, որոնք մինչ ԽՍՀՄ փլուզումը միասնական պետության քաղաքացիներ էին, վերածվեցին ազգային փոքրամասնության ներկայացուցիչների, իսկ ընդհանուր առմամբ՝ Սփյուռքի: Ակնհայտ է, որ կազմակերպական խնդիրները հետխորհրդային հայ համայնքներում այնքան էլ բարձր մակարդակի վրա չեն, ուստի շատ արագ անհրաժեշտություն ծագեց կյանքի կոչելու համայնքային կազմակերպություններ: Բացի տեղային համայնքային կազմակերպություններից՝ շուտով հիմնադրվում են առավել ընդգրկուն հայկական կազմակերպություններ, որոնցից կարևորներն էին 2000 թ. ստեղծված Ռուսաստանի հայերի միությունը և 2001 թ. ստեղծված Ուկրաինայի հայերի միությունը:

Սփյուռքի պատմության պարբերացումը սփյուռքյան զարգացումների և Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների ընդհանուր համատեքսուում

Վերը քննարկված իրողությունները ցույց են տալիս, որ Սփյուռքի շուրջ 100-ամյա պատմության պարբերացումն անհնար է արդյունավետորեն իրականացնել՝ առանց հաշվի առնելու Սփյուռքի հիմնական զարգացումները և Հայրենիք-Սփյուռք առնչության խնդիրը:

Մեր նախորդների մոտեցումները, լինելով խիստ իրատեսական, շրջանցել են մեկ կարևոր իրողություն. *Սփյուռքի ամրող պատմությունը, ի տար-*

¹Տե՛ս՝ Պատմագրություն Հայ Յեղափոխական Դաշնակցության, Դ հատոր, էջ 371-404:

բերություն հայ գաղթաշխարիի պատմության, մշտապես ուղեկցվել է հայրենի պետության առկայությամբ, չնայած Հայոց պետականությունը տարբեր կերպափոխումներ է ունեցել: Սփյուռքի վրա այս կամ այն չափով իրենց ազդեցությունն են թողել հիմնականում այդ կերպափոխումները: Խնդիրն այն է, որ հայկական երեք հանրապետություններից Սփյուռքը տևականորեն առնչվել է Խորհրդային Հայաստանի հետ, երբ Սփյուռքի հետ հարաբերություններում առկա էին անլուծելի մի շարք խնդիրներ: Այդ իսկ պատճառով, չնայած հայրենի պետության առկայությանը, տասնամյակներ շարունակ Սփյուռքը նրա հետ հարաբերություններ չի ունեցել:

Մյուս կարևոր խնդիրն առնչվում է Հայաստանի քաղաքական անկախության վերականգնմանը հաջորդած առաջին տարիներին երկրում սկիզբ առած արտագաղթի հետևանքով տասնյակհազարավոր հայերի հաստամանը Սփյուռքում, որին, ինչպես վերը տեսանք, Սփյուռքի պատմության պարբերացումներում էական նշանակություն չի տրվել:

Հաշվի առնելով նաև վերոհիշյալը՝ ներկայացնենք Սփյուռքի պատմության պարբերացման մեր հայեցակետը.

1. Սփյուռքի ձևավորման և Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների սկզբնավորման ժամանակաշրջան (1918-1920 թթ.):

Այդ ժամանակաշրջանում՝

ա. ցեղասպանությունից փրկված և հայ գաղթաշխարիի շարքերը համալրած հարյուրհազարավոր գաղթականների առկայությամբ աստիճանաբար ձևավորվում է և կայանում Սփյուռքը՝ որպես աշխարհասփյուտ հայության հավաքական կենսագործունեության միջավայր,

բ. նորաստեղծ Հայաստանի Առաջին Հանրապետությունը, ի սկզբանե գտնվելով բարդ քաղաքական գործընթացների կիզակետում, Սփյուռքի հետ կայուն ու զարգացող հարաբերություններ հաստատել շկարողացավ, չնայած փորձ կատարեց ապահովելու Սփյուռքի աջակցությունը:

2. Սփյուռքի կազմակերպակառուցվածքային զարգացման և Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների անկման շրջան (1921-1937 թթ.):

Այդ ժամանակաշրջանում՝

ա. Սփյուռքում վաղուց ի վեր գոյություն ունեցող կուսակցություններից և համասփյուռյան կազմակերպություններից (ՍԴՀԿ, ՀՅԴՄ, Հայ օգնության միություն և այլն) բացի ձևավորվում են նաև հասրաբակական-քաղաքական (Ռամկավար ազատական կուսակցություն) և կրթամշակութային (Համազգային հայ կրթական և մշակութային միություն) բնույթի համասփյուռյան կազմակերպություններ, որոնց առաքելությունը հայապահպանությունն էր և հայության կազմակերպումն ու միավորումը,

- թ. Սվյուտքի տարբեր համայնքներում ձևավորվում են համայնքային-տեղական կազմակերպություններ, որոնք գործում էին առանձին վերցրած պետության, երկրամասի կամ քաղաքի հայության շրջանում,
- գ. 1921 թ. Փետրվարյան ապստամբության ճնշումից հետո Սվյուտքում հաստատվում են Հայաստանի Առաջին Հանրապետության դեկավարները, որոնք մշակում են աշխարհասփյուռ հայության հավաքական կենսագործունեության՝ «Հոգևոր Հայաստան» անունը ստացած միջավայրի ձևավորման հայեցակարգը, որի վերջնանպատակը տարաբնույթ ապակուսակցական համասվյուռքյան կազմակերպությունների միջոցով սվյուտքահայության կյանքի համակարգումն էր,
- դ. Խորհրդային Հայաստանի իշխանությունները Սվյուտքի օժանդակությունն ապահովելու համար 1921 թ. կյանքի են կոչում Հայաստանի օգնության կոմիտեն, իսկ այնուհետև անհրաժեշտաբար ձեռնամուխ լինում գաղթականների մասնակի ներգաղթ կազմակերպելու գործին,
- ե. Խորհրդային Հայաստանում աստիճանաբար արգելվում է Սվյուտքի կազմակերպությունների գործունեությունը, և միակ բացառությունը մինչև 1937 թ. երկրում օրինական ներկայացուցիչ ունեցող ՀԲԸ-ն էր:
- 3. Սվյուտքում քաղաքական մտքի վերելքի և Խորհրդային Հայաստան-Սվյուտք քաղաքական հակասությունների շրջան (1937-1964 թթ.):**

Այդ ժամանակաշրջանում՝

- ա. Երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքով վտանգի ենթարկված հայության խնդիրների լուծման հրամայականն աշխուժացնում է հայ քաղաքական միտքը Սվյուտքում, որը սկսում է հայության կյանքի անվտանգության ապահովման ուղիների վնատրությունը՝ հարաբերությունների մեջ մտնելով նացիստական Գերմանիայի իշխանությունների հետ և ԱՄՆ-ում հիմնադրելով հայության իրավունքների պաշտպանությանը միտված Հայ դատի հանձնախումբը,
- թ. Խորհրդային իշխանությունները, հետապնդելով զուտ քաղաքական նպատակներ¹, 1946-1949 թթ. կազմակերպեցին սվյուտքահայության ներգաղթը, որը ոչ միայն չնպաստեց Հայրենիք-Սվյուտք հարաբերությունների վերականգնմանը, այլև սրեց հարաբերությունները Սվյուտքում՝ կապված այդ գործընթացի նկատմամբ սվյուտքյան կազմակերպությունների դիրքորոշման, ինչպես նաև ներգաղթողների նկատմամբ կիրառվող հալածանքների հետ,
- զ. Առաջին աշխարհամարտին հաջորդած սառը պատերազմի հետևանքով հայությունն աշխարհաքաղաքական առումով երկփեղկվեց, ըստ որում՝ Խորհրդային Հայաստանը և Խորհրդային Սիության հայությունը հայտնվեցին այսպես կոչված սոցիալիստական, իսկ սվյուտքահայությունը՝ հակառակ ճամբարներում,

¹Տե՛ս Ստեփանյան Ա., XX դարի հայրենադարձությունը..., էջ 85-88:

- դ. այդ պատճառով սփյուռքահայության հետագա ներգաղթը շուրջ երկու տասնամյակով հետաձգվեց,
- Ե. Սփյուռքում սկսվեց համասփյության մշակութային նոր կազմակերպությունների ստեղծման գործընթացը, և եթե ՀՅԴ-ը նման կազմակերպություն ստեղծել էր դեռևս 1928 թ., ապա ՌԱԿ-ի կողմից «Թերեյան» մշակութային միությունը հիմնադրվեց 1947 թ., իսկ Սոցիալ դեմոկրատ հնչակյան կուսակցության «Նոր սերունդ» մշակութային միությունը ստեղծվեց 1955 թ.: Այս գործընթացը հետևանք էր այն իրողության, որ Սփյուռքի կուսակցություններում գիտակցել էին Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների երկարատև խզման հեռանկարը և ձեռնարկել միայն սեփական ուժերով սփյուռքահայության կրթամշակութային կյանքի կազմակերպումը:

4. Սփյուռքում նոր զարգացումների և Խորհրդային Հայաստան-Սփյուռք հարաբերությունների բարեկավման շրջան (1964-1988 թթ.):

Այդ ժամանակաշրջանում՝

- ա. սփյուռքահայ կրթամշակութային կյանքի զարգացումը և քաղաքական մտքի վերելիք շարունակությունը 1972 թ. ԱՄՆ-ում ծնունդ տվեցին Ամերիկայի հայկական համագումար կազմակերպությանը¹,
- բ. Հայ դատի լուծման և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հրամայականը Սփյուռքում արմատական քայլերի դրույց որոշ անհատների ու կազմակերպությունների, որի հետևանքով 1970-ական թթ. սկզբին ծնունդ առան հայկական ռազմաքաղաքական և վրիժառուական կազմակերպություններ, որոնցից ամենահիշարժանը Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակն ու Հայոց ցեղասպանության արդարության մարտիկներն էին,
- շ. 1961 թ. խորհրդային իշխանությունը որոշում ընդունեց սփյուռքահայերի նոր ներգաղթ կազմակերպելու վերաբերյալ, որի արդյունքում 1960-1970-ական թթ. Խորհրդային Հայաստան ներգաղթեց ավելի քան 30 հազար սփյուռքահայ²,
- դ. 1964 թ. Խորհրդային Հայաստանի իշխանությունը սփյուռքում ընդունեց սփյուռքահայերի նոր ներգաղթ կազմակերպելու վերաբերյալ, որի արդյունքում 1960-1970-ական թթ. Խորհրդային Հայաստան ներգաղթեց ավելի քան 30 հազար սփյուռքահայ,
- ե. 1964 թ. Խորհրդային Հայաստանի իշխանությունները Սփյուռքի հետ կապերի վերականգնման և ամրապնդման նպատակով հիմնադրեցին Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն, որը բեղմնավոր գործունեություն ծավալեց 1960-1980-ական թվականներին,
- թ. Խորհրդային իշխանություններն աստիճանաբար սկսում են մեղմացնել անհաշտ քաղաքականությունը Սփյուռքի կազմակերպություններին,

¹Տե՛ս Նահապետյան Վ., Ամերիկայի հայկական համագումարի կազմավորումը, նպատակներն ու կառուցվածքը, ԼՀԳ, 1997, թիվ 3, էջ 25-32:

²Տե՛ս Մելիքսեթյան Հ., նշվ. աշխ., էջ 255-258:

թի նկատմամբ՝ որպես բացառություն պահպանելով թշնամանքը միայն ՀՅԴ նկատմամբ¹:

5. *Սփյուռքի՝ դեպի Հայրենիք շրջադարձի, Հայրենիք-Սփյուռք ազատ հարաբերությունների և Նոր Սփյուռքի ձևավորման շրջան (1988 թվականից մինչև օրս):*

Այդ ժամանակաշրջանում՝

- ա. սկիզբ առած Արցախյան շարժումը, հայերի նոր ցեղասպանությունը Սումգայիթում, ինչպես նաև ավերիչ երկրաշարժը համայն հայության ուշադրությունը և պայքարի ավլունն ուղղորդեցին դեպի հայրենիք,
- բ. Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումը նոր լիցք հաղորդեց արդեն իսկ սերտացող Հայրենիք-Սփյուռք հարաբերություններին, և Սփյուռքի առաջ վերջապես բացվեցին հայրենի պետության փակ դրուերը,
- գ. Հայաստանի քաղաքական անկախության վերականգնմանը հաջորդած առաջին տարիներին ստեղծված դժվարին իրավիճակից դրդված՝ տասնյակհազարավոր հայեր արտագաղթեցին երկրից, որի հետևանքով ավելի մեծացավ ափյուռքահայության թվաքանակը, և Սփյուռքում իրավիճակը որոշակիորեն փոխվեց,
- դ. 1992 թ. ստեղծվեց «Հայաստան» համահայկական հիմնադրամը հայկական երկու հանրապետությունների կենսական մի շարք խնդիրները համահայկական միջոցներով լուծելու նպատակով,
- է. Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները որոշակի տեղատվություն ապրեցին սփյուռքյան քաղաքական կազմակերպությունների՝ Հայրենիքում ունեցած հիմնականում քաղաքական խնդիրների պատճառով, սակայն դրանք ի զորու չեղան խափանելու Հայրենիք-Սփյուռք համախմբման անբեկանելի ընթացքը,
- զ. Հայաստանի Երրորդ Հանրապետության երկրորդ նախագահ Ռ. Քոչարյանի օրոք վերջնականապես լուծում ստացան Հայրենիք-Սփյուռք հարաբերություններում առկա մի շարք խնդիրներ, և մասնավորապես ձևավորվեց ընդհանուր քաղաքական օրակարգ,
- է. 1999, 2002 և 2006 թթ. տեղի ունեցան Հայաստան-Սփյուռք երեք խորհրդաժողովներ, որոնց հիմնական նպատակը համազգային օրակարգի, հայության առաջ ծառացած խնդիրների լուծման համատեղ ձևաչափերի և Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների համակարգման մեխանիզմների մշակումն էր,
- ը. ԽՄՀՄ տարածքում բնակվող հայությունը 1991 թ. ի վեր կանգնեց «սփյուռքացման» գործընթացի անհրաժեշտության առջև, որի արդյունքում գրեթե բոլոր նախկին խորհրդային պետություններում աստիճանաբար հիմնադրվեցին ընդհանուր և տեղային բնույթի հա-

¹Տե՛ս Դավթյան Կ., Հայ Սփյուռքի պատմություն, էջ 46:

մայնքային հասարակական կազմակերպություններ՝ հայության տարբեր հատվածների համար հավաքական կենսագործունեության միջավայրեր ձևավորելու նպատակով,

- թ. 2005 թ. սահմանադրական հանրաքվեի արդյունքում Հայաստանի Երրորդ Հանրապետությունում ներդրվեց երկրադաքային ինստիտուտը, որը Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների սերտացման և սփյուռքահայության ինտեգրման կարևոր միջոց էր,
- ժ. 2008 թ. Հայաստանի Երրորդ Հանրապետության երրորդ նախագահ Ս. Սարգսյանի հրամանագրով ստեղծվեց ՀՀ սփյուռքի նախարարություն, որը նոր շրջափուլ բացեց Հայրենիք-Սփյուռք հարաբերություններում՝ նախանշելով հայրենի պետության նպատակադիր ընթացքը դեպի երկկողմ ինտեգրում:

Այս պարբերացումն ուսումնասիրողների առջև լայն հորիզոններ է բացում առաջին հերթին և գլխավորապես Սփյուռքը որպես ամբողջական համակեցական համակարգ դիտարկելու տեսանկյունից: Մյուս կողմից, հավասարապես կարևորելով սփյուռքյան զարգացումներն ու Հայրենիք-Սփյուռք առնչությունները, այն հնարավորություն է ընձեռում բացահայտելու Սփյուռքի պատմության այս կամ այն պարբերաշրջանի առանձնահատկությունները և զարգացման օրինաչփությունները:

Նշենք նաև, որ մեր առաջադրած պարբերացումն ամենայն չի հավակնում վերջնական համարվելու: Այն կարող է լրացվել և ամբողջացվել նոր հետազոտությունների արդյունքներով:

Arman Yeghiazaryan – *Periodization of the Armenian Diaspora (Spyurk) History*

A number of scientists have approached the problem of periodization of the Armenian Diaspora (Spyurk) history. Some of them have attempted to periodize the history of the Spyurk based on the Homeland-Spyurk relations. Others have observed the problem through the main developments of the history of Spyurk.

The author suggests a periodization model which includes the basic principles of the both above mentioned approaches. The model is based on the main developments and events either of the Spyurk history or the Homeland-Spyurk relations.